

Տոնական բարիքներ միայնակ ծերերին

Վիրահայոց թեմում, ի մասնավորի Թբիլիսիի Սուրբ Գևորգ առաջնորդանիստ և Հավլաբարի Սուրբ Էջմիածին եկեղեցիներում, բարի ավանդույթ է դարձել միայնակ ծերերի Սուրբ Հարության տոնը շնորհավորել զատկական նվերներով։ Հետամուտ լինելով Քրիստոսի հրաշափառ հարության տոնը բոլոր ընտանիքներում տոնական դարձնելու նպատակին, թբիլիսահայ հավատացյալները իրենց օգնությունն են ցուցաբերում դրա կարիքն ունեցողներին։

Այս գեղեցիկ նախաձեռնությունը կյանքի կոչվեց նաև այս տարի։ 2017 թվականի ապրիլի 14-ին և 15-ին, Թբիլիսիի երկու եկեղեցիներում, Սուրբ Գևորգ եկեղեցու եկեղեցասեր կանանց միության և Վրաստանի հայ կանանց «Շուշանիկ» միության նախաձեռնությամբ, եկեղեցիների խաչի քավորներ Յուրի Երեմյանի և Կարեն Սարգսյանի ու հավատացյալների աջակցությամբ, տոնական բարիքներով նվերներ ստացան 100-ից ավելի թբիլիսաբնակ բազմանդամ ընտանիքներ, կարիքավոր, միայնակ և հաշմանդամ ծերեր։ Բարեգործական ակցիան տարիներ շարունակ անընդմեջ նախաձեռնում է Վրաստանի հայ կանանց «Շուշանիկ» միությունը (նախագահ Սուսաննա Խաչատրյան) Վիրահայոց թեմի առաջնորդարանի և Թբիլիսիի հայոց երկու եկեղեցիների հոգևոր դասի աջակցությամբ։ Զատկական նվերաբաշխությանը սիրով և պատրաստակամությամբ ընդգրկվում են բազում

1 / 3









Տոնական բարիքներ միայնակ ծերերին

հայորդիներ:

2 / 3





Տոնական բարիքներ միայնակ ծերերին

3 / 3